



Սարյան 10 / 10 Saryan str., հեռ. /tel.: (+374 10) 54 56 27, (+374 91) 23 29 54, E-mail: legal\_audit@mail.ru

« 04 » *ապրիլ* 2011թ.

ք. Երևան  
Yerevan c.

## ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### «Առանցք» ՍՊԸ մասնակիցներին

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել «Առանցք» ՍՊ ընկերության կից ներկայացված 2010թ տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010թ դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

### Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Նշված ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատ ներկայացնելու համար պատասխանատվություն է կրում ընկերության տնօրինությունը: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

### Աուդիտորի պատասխանատվությունը և աշխատանքների բնույթի նկարագիրը

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոններ, աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են աուդիտորի դատողության վրա հիմնված ընթացակարգերի իրականացում, որոնք ուղղված են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանը: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### Կարծիք

Մեր կարծիքով «Առանցք» ՍՊ ընկերության կողմից կազմված տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը և կազմված են ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համահունչ:

«Լեգալ-Աուդիտ» ՍՊԸ տնօրեն և աուդիտոր

Ս.Եղիազարյան

